Disability Rights California

*Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ*

# Հաշմանդամության խտրականությանը վերաբերող ամփոփաթերթ. քոլեջներ և համալսարաններ

*Փետրվար, 2018թ.,հրատ. #F111.10-Armenian*

## Հաշմանդամության խտրականությանը վերաբերող դաշնային և նահանգային օրենքներ

Քոլեջների և համալսարանների հաշմանդամ ուսանողները և դիմորդները պաշտպանվում են հաշմանդամության հիմքով խտրականության դեմ՝ դաշնային և նահանգային հակախտրականության օրենքների համաձայն:

«Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի» (ADA, Americans with Disabilities Act) III վերնագիրն արգելում է հաշմանդամության հիմքով խտրականությունը՝ մասնավոր քոլեջների և համալսարանների և այլ բիզնես իրականացնողների և հասարակական ծառայություններ տրամադրողների կողմից: Այս կազմակերպությունները հայտնի են որպես «հանրային վայրեր»: ADA-ի II վերնագիրը վերաբերում է նահանգային և տեղական պետական կազմակերպություններին, այդ թվում հանրային քոլեջներին և համալսարաններին: Պաշտպանության այս ձևերը ներառում են՝ 1) ոչ-խտրական պահանջներ, որոնք արգելում են բացառումը, մեկուսացումը և հաշմանդամ անձանց հանդեպ անհավասար վերաբերմունքը. 2) պահանջներ առ այն, որ քոլեջները և համալսարանները պատշաճ հարմարեցումներ տրամադրեն հաշմանդամ մարդկանց,

որպեսզի երաշխավորեն, որ նրանք հավասարապես օգտվում են բարձրագույն կրթության ծառայություններից. և 3) ճարտարապետական ստանդարտներ նոր և փոփոխված շինությունների համար, քաղաքականությունների, գործելակերպերի և ընթացակարգերի պատշաճ փոփոխությունների պահանջներ, ինչպես նաև պահանջներ՝ վերացնելու այն խոչընդոտները,որոնք կան գոյություն ունեցող շինություններում, երբ այն դյուրությամբ մատչելի է, ինչպես նաև մատչելիության այլ պահանջներ: «Վերականգնման մասին օրենքի» 504 հոդվածը պաշտպանության (Rehabilitation Act) նման միջոցներ է տրամադրում այն կազմակերպությունների առնչությամբ, որոնք դաշնային ֆինանսական միջոցներ են ստանում:

Կալիֆորնիայի օրենքը պաշտպանության նպանատիպ միջոցներ է տրամադրում: Ունրուհի քաղաքացիական իրավունքների մասին օրենքը (Unruh Civil Rights Act) և հաշմանդամ անձանց մասին օրենքն (Disabled Persons Act) արգելում է հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը որևէ բիզնես կազմակերպության կողմից: Կառավարության օրենսգրքի (Government Code) 11135 հոդվածն արգելում է խտրականությունն այն բիզնես և պետական կազմակերպությունների կողմից, ովքեր նահանգային ֆինանսական միջոցներ են ստանում: III վերնագրի խախտումը նույնպես նահանգային օրենքի խախտում է: Սակայն, որոշ հանգամանքներում նահանգային օրենքը կարող է պաշտպանության ավելի բարձր մակարդակ տրամադրել, քան դաշնային օրենքն է տրամադրում:

Դուք՝ որպես դիմորդ կամ ուսանող, կարող եք ցանկացած պահի պատշաճ հարմարեցումներ խնդրել քոլեջից կամ համալսարանից: Խնդրանքը կարող է ցանկացած ձևակերպում ունենալ, բայց լավագույն ձևը խնդրանքը գրավոր ձևակերպելն է, եթե հնարավոր է: Խնդրանքը պետք է ներառի նամակ բուժող բժշկից, որտեղ կբացատրվի հարմարեցման համար անհրաժեշտ Ձեր հաշմանդամությանն առնչվող կարիքը: Ստորև ներկայացված են նամակների նմուշներ՝ պատշաճ հարմարեցում խնդրելու և աջակցելու համար:

Նահանգային և դաշնային այն գործակալությունների կայքէջերը, որոնք բարձրագույն կրթության համար պաշտպանության հարկադիր միջոցներ են կիրառում խտրականության դեմ, տրամադրում են օգտակար ռեսուրսներ՝ հասկանալու Ձեր օրինական իրավունքները՝ դաշնային և նահանգային օրենսդրության ներքո.

- Կալիֆորնիայի արդար աշխատանքի և կացարանների նախարարություն http://www.defh.ca.gov
- ԱՄՆ Կրթության նախարարության քաղաքացիական իրավունքների գրասենյակ (OCR, Office of Civil Rights) http://www2.ed.gov/policy/rights/guid/ocr/disability.html

## Հաշմանդամ անձանց շահերի ինքնապաշտպանություն

Եթե Ձեր ուսումնական հաստատությունը մերժում է Ձեզ հարմարեցումներ տրամադրել, որոնց կարիքը Դուք ունեք կամ որևէ այլ կերպով խտրականություն է դրսևորում Ձեր հանդեպ Ձեր հաշմանդամության պատճառով, Դուք կարող եք ներքին գանգատ ներկայացնել, որը վարչական բողոք է նահանգային և դաշնային մակարդակում, կամ դատական գործ հարուցել:

### Ներքին գագատներ

Շատ քոլեջներից և համալսարաններից պահանջվում է գանգատարկման ընթացակարգեր ունենալ այն ուսանողների համար, ովքեր կարծում են, որ իրենց իրավունքները ոտնահարվել են: Այս ընթացակարգերը կարող են տարբեր ուսումնական հաստատություններում տարբերվել: Եթե Դուք ցանկանում եք ներքին գանգատ ներկայացնել Ձեր ուսումնական հաստատությանը, դրա Հաշմանդամ աշակերտների ծրագրին (Disabled Students Program), ADA-ին կամ կամ 504 հոդվածի համակարգողին կամ ուսանողական հարցերով դեկանին խնդրեք հավելյալ տեղեկություններ տրամադրել:

### Դաշնային վարչական բողոքներ

ԱՄՆ Կրթության նախարարության քաղաքացիական իրավունքների գրասենյակը (OCR) հետաքննում է այն

ուսումնական հաստատությունների խախտումները, որոնք դաշնային ֆինանսական աջակցություն են ստանում: Այս ուսումնական հաստատությունները ներառված են ADA-ի «Վերականգնման մասին օրենքի» 504 հոդվածում: OCR-ին ուղղված բողոքները պետք է ներկայացվեն խտրականության դրսևորման օրվանից սկսած 180 օրվա ընթացքում, եթե Դուք դեռ չեք անցել Ձեր ուսումնական հաստատության ներքին բողոքարկման գործընթացով կամ եթե OCR-ը Ձեզ հրաժարում է տրամադրել: Եթե Դուք ավարտել եք Ձեր ուսումնական հաստատության ներքին բողոքարկման գործընթացը, Դուք պետք է ուսումնական հաստատության որոշման տրման օրվանից սկսած 60 օրվա ընթացքում Ձեր բողոքը ներկայացնեք OCR-ին: Դուք կարող եք հետևյալ հղմամբ տեղեկություններ գտնել OCR-ին բողոք ներկայացնելու վերաբերյալ՝ www.ed.gov/ocr.

ԱՄՆ Արդարադատության նախարարությունը (DOJ, Department of Justice) նույնպես ADA-ի ներքո հետաքննում է մասնավոր քոլեջների և համալսարանների խախտումները: ADA-ի վերնագիր II-ի բողոքները պետք է ներկայացվեն խտրականության դրսևորման ամսաթվից սկսած 180 օրվա ընթացքում: III վերնագրի բողոքները կարող են ցանկացած պահի ներկայացվել DOJ: Սակայն լավագույն ձևը հնարավորինս շուտ ներկայացնելն է, որովհետև ժամանակահատվածը կարող է դժվարացնել խտրականության հաստատումը:

Դուք կարող եք հետևյալ հղմամբ տեղեկություններ գտնել առայն, թե ինչպես պետք է առցանց բողոք ներկայացնել ԱՄՆ Արդարադատության նախարարությանը՝ http://www.ada.gov/filing_complaint.htm.

## Կալիֆորնիայի արդար աշխատանքի և կացարանների նախարարությանն ուղղված բողոքները

Կալիֆորնիայի կառավարության օրենսգրքի 11135 հոդվածը հարկադիր կիրառվում է Կալիֆորնիայի արդար աշխատանքի և կացարանների նախարարության (DFEH, Department of Fair Employment և Housing) կողմից: Դուք կարող եք վարչական բողոք ներկայացնել DFEH ստորև տրված ընտրանքներն օգտագործելով: Դուք պետք է

խտրականության դրսևորումից հետո մեկ տարվա ընթացքում ներկայացնեք բողոքը:

Դուք կարող եք առցանց ներկայացնել DFEH գանգատը՝ https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/

**Դատավարություն**

Օրենքի խախտման վերոնշյալ քննարկված դեպքերը նաև կարող են քննվել մասնավոր դատական գործի միջոցով: Խնդրում ենք տեղյակ լինել, որ սահմանափակումներին վերաբերող օրենսդրական ակտերը սահմանափակում են դատավարություն ներկայացնելու ժամկետը, և որ Դուք կարող եք հավանաբար կորցնել գանգատարկման իրավունքը, եթե սահմանափակումներին վերաբերող կիրառելի օրենսդրական ակտերի շրջանակում չգործեք: Այս վերջնաժամկետները կարող են երկու տարուց կարճ լինել՝ սկսած խտրականության դրսևորման ամսաթվից:

Բացի այդ, կառավարության քաղաքացիական իրավախախտումների գանգատների (Government Tort Claims Act) մասին օրենքը պահանջում է, որ կառավարության քաղաքացիական իրավախախտումները ներկայացվեն խտրականության դեպքից հետո վեց ամսվա ընթացքում՝ նահանգային կամ տեղական պետական կազմակերպության դեմ դատական գործ հարուցելով՝ դրամական կորստի մասին: Քաղաքացիական իրավունքների իրավախախտման վերաբերյալ հավելյալ տեղեկություններ կարելի է գտնել՝ http://www.disabilityrightsca.org/pubs/522901.htm: Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ այս կայքէջը հղում է կատարում այն ձևաթղթին, որն անհրաժեշտ է նահանգային կամ դաշնային գործակալության կամ աշխատակցի դեմ բողոք ներկայացնելու համար, որը կարող է Ձեր դեպքում կիրառելի չլինել: Այլ հանրային կազմակերպությունները կարող են քաղաքացիական իրավունքների իրավախախտման իրենց սեփական բողոքներն ունենալ, որոնք մատչելի են իրենց կայքէջերում: Եթե Դուք հետաքրքրված եք դատավարության հետապնդման մեջ, կարող եք հնարավորինս շուտ խորհրդակցել փաստաբանի հետ:

Եթե Դուք 10000 ԱՄՆ դոլարից ավելի քիչ եք պահանջում վնասի դիմաց, մեկ այլ տարբերակ է Փոքր բողոքների դատարանում խտրականության մասին գործ հարուցելը

(Small Claims Court): Սահմանափակումներին վերաբերող օրենսդրական ակտերը, որոնք քննարկվեցին վերևում, կիրառելի են: Եթե Դուք դիմեք փոքր բողոքների դատարան, ապա չեք կարողանա օգտվել փաստաբանի ծառայություններից: Այստեղ հղում է տրված Disability Rights California-ի այն հրապարակմանը, որտեղ բացատրվում է խտրականության դեպքերի համար փոքր բողոքների օգտագործումը՝ http://www.disabilityrightsca.org/pubs/520601.pdf: Այս վերջնաժամկետները կարող են երկու տարուց կարճ լինել՝ սկսած խտրականության դրսևորման ամսաթվից: Եթե Դուք որոշեք հայց հարուցել, Դուք պետք է սրանք և մնացած վերջնաժամկետները քննարկեք Ձեր անձնական փաստաբանի հետ:

# Պատշաճ հարմարություններ խնդրելու նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [քոլեջ կամ համալսարան]՝

Ես գրում եմ Ձեզ՝ պատշաճ հարմարեցումներ խնդրելու իմ հաշմանդամության/հաշմանդամությունների համար:

Ես [ուսանող եմ/դիմորդ եմ, ով ցանկանում է ուսանող դառնալ] [ուսումնական հաստատության անունը]-ում: Իմ հաշմանդամության պատճառով ես հետևյալ հարմարեցումների կարիքն ունեմ՝ [նշել հարմարեցումները]:

Իմ [բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/աշխատանքային թերապևտը/այլ անձ (նկարագրել)] համարում է, որ այս հարմարեցումները/փոփոխությունները անհրաժեշտ են իմ հաշմանդամության պատճառով: Խնդրում եմ նայել կից նամակի ձևաթուղթը [բժշկի կամ մասնագետի անունը]-ից:

Դաշնային և նահանգային օրենքները պահանջում են, որ քոլեջները և համալսարանները պատշաճ հարմարեցումներ տրամադրեն հաշմանդամ ուսանողներին և դիմորդներին: Խնդրում եմ այս խնդրանքին պատասխանել մինչև [ամսաթիվ]: Խնդրում եմ դիմել ինձ [Ձեր հեռախոսահամարը և/կամ էլ.փոստի հասցեն] միջոցով, եթե Դուք որևէ հարց ունեք: Շնորհակալություն:

Հարգանքով՝

[Ձեր անունը]

[Ձեր հասցեն]

## Աջակցող նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [քոլեջ կամ համալսարան]՝

Ես [անուն]-ի [բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/աշխատանքային թերապևտն] եմ և ծանոթ եմ նրա առողջական խնդրին: [Նա] հաշմանդամություն ունի, ինչը որոշակի ֆունկցիոնալ սահմանափակումներ է ստեղծում: Այս սահմանափակումները ներառում են [նշեք ֆունկցիոնալ սահմանափակումները, որոնք հայցված հարմարեցումներն են պահանջում]:

[հայցված հարմարեցումը] անհրաժեշտ է [անուն]-ի համար՝ [դիմելու /հավասարապես օգտվելու ծառայություններից և նպաստներից] [ուսումնական հաստատության անունը]-ից: [նկարագրեք, թե հարմարեցումն ինչպես կօգնի կամ կաջակցի անհատին]:

Շնորհակալություն այս պատշաճ հարմարեցումը [անուն]-ին տրամադրելու համար:

Հարգանքով՝

[Անուն և պաշտոն]

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [Լրացնել հարցումը]

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության խնդրանքի ձևաթուղթ: Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա):

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝ http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html